Ընդունվել է. 26.06.2009
Ստորագրվել է. 02.07.2009
ՈՒժի մեջ է մտել. 03.07.2009

040.0707.020709

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

26 հունիսի 2009 թվականի N 707-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N 500-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի «Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» N 500-Ա որոշման 1-ին կետը «Արթիկ քաղաքի Գարեգին Նժդեհի 1 (3) հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկից՝ 58,6 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 1572000 դրամ հաշվեկշռային արժեքով,» բառերից հետո լրացնել «4-րդ հարկից՝ 34,7 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 912000 դրամ հաշվեկշռային արժեքով,» բառերով, իսկ «Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի N 33 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկից՝ 60 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 2036000 դրամ հաշվեկշռային արժեքով» բառերը փոխարինել «Մեղրի քաղաքի Մեղրաձորի 3 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկից՝ 47,6 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 399887 դրամ հաշվեկշռային արժեքով» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզպետներին՝ առաջարկել Ապարանի, Ծաղկահովտի, Թալինի, Մարտունու, Սևանի, Սպիտակի, Ստեփանավանի, Եղվարդի, Մարալիկի, Աշոցքի, Ջերմուկի, Նոյեմբերյանի և Բերդի քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարներին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի հետ կնքել համայնքային սեփականություն հանդիսացող՝ Ապարան քաղաքի Մարշալ Բաղրամյան 26 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկից՝ 40 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Ծաղկահովիտ գյուղի գյուղապետարանի վարչական շենքի 3-րդ հարկից՝ 34,4 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Թալին քաղաքի Գայի 1 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից 16 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 2-րդ հարկից՝ 59 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Մարտունի քաղաքի Շահումյան 2 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից՝ 59.1 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Սևան քաղաքի Նաիրյան 164 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից՝ 78 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Սպիտակ քաղաքի Շահումյան 7 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից՝ 9 քառ. մետր ընդհանուր մակերեսով և նկուղային հարկից՝ 50 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Ստեփանավան քաղաքի Միլիոնի N 1 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից՝ 18,6 քառ. մետր ընդհանուր մակերեսով և նկուղային հարկից՝ 25 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Եղվարդ քաղաքի Երևանյան 1 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկից՝ 58,8 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Մարալիկ քաղաքի Մադաթյան 1 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկից՝ 71,7 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Աշոցք գյուղի գյուղապետարանի վարչական շենքի 2-րդ հարկից՝ 72 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան 8 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից՝ 14,5 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Նոյեմբերյան քաղաքի Երևանյան 4 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկից՝ 58,8 քառ. մետր ընդհանուր մակերեսով, Բերդ քաղաքի Լևոն Բեկի 5 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկից՝ 59 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքների անհատույց օգտագործման մասին պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրերի կնքման և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվելու են «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-ԻՆ